ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝Ուսուցչի կողմից երեխաների ուսումնական ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը

Առարկա՝Մաթեմատիկա

Հեղինակ՝ Վարդանյան Կարինե

Ղեկավար՝ Խաչատրյան Սոնա

Ուսումնական հաստատություն՝ Երևանի Սամվել Հովսեփյանի անվան հ.116 հիմնական դպրոց

Երևան 2023 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

1. Ուսուցչի մասնագիտական որակները երեխաների հետ աշխատանքի ընթացքում……5
2. Ուսուցչի կողմից երեխաների ուսումնական ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը……8

Եզրակացություն……15

Օգտագործված գրականության ցանկ……17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Հազարամյակների ընթացքում ուսուցչի մասնագիտությունը, որպես այդպիսին, մնացել է անփոփոխ, չնայած նրա բովանդակությունը, աշխատանքային պայմանները, քանակական և որակակն կազմը փոխվում է:

Մանկավարժին՝ որպես գործունեության սուբյեկտի դիտարկելիս հետազոտողները առանձնացնում են մասնագիտական-մանկավարժական որակներ, որոնք կարող են մոտ լինել ընդունակություններին և զուտ անձնային որակներին: Դրանց են դասվում՝ մանկավարժական էրուդիցիա, մանկավարժական նպատակադրում, մանկավարժական մտածողություն, մանկավարժական հնարամտությունը, մանկավարժական կանխատեսումը, մանկավարժական ռեֆլեքսիան:

Անձնային ուղղվածությունը հանդիսանում է մասնագիտական-մանկավարժական գործունեությունում կատարելության ձեռքբերման կարևորագույն սուբյեկտիվ գործոններից մեկը:

Հանրակրթական դպրոցներում մանկավարժը պետք է ունենա բազմակողմանի զարգացվածություն, լայն մտահորիզոն և ցանկացած պահի, ինչպես հանրագիտակը, հանպատրաստից պատասխանի աշխակերտների հարցերին: Նա պետք է տիրապետի իր մասնագիտության յուրաքանչյուր տարրին, մանրամասներին (դետալներին):

Մանկավարժը պետք է աշակերտներին հաղորդի ճշգրիտ, ստուգված, փորձված, ապացուցված գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ, առաջնորդվելով ուսուցման գիտականության, սիստեմատիկության ու հաջորդականության, զննականության և այլ սկզբունքներով:

Մանկավարժը մշտապես պետք է հաշվի առնի սովորողների տարիքային ու անհատական առանձնահատկությունները և ուսումնական հնարավորությունները: Մանկավարժի հաղորդած գիտելիքները պետք է ծառայեն մանկավարժական խնդիրների լուծմանը և ընկած լինեն նրա մասնագիտական կարողությունների հիմքում:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել **ուսուցչի կողմից երեխաների ուսումնական ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը:**

Նշված նպատակն իրագործելու համար աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են հետևյալ հիմնական **խնդիրները.**

- ուսումնասիրել ուսուցչի մասնագիտական որակները երեխաների հետ աշխատանքի ընթացքում,
- ներկայացնել ուսուցչի կողմից երեխաների ուսումնական ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը:

Աշխատանքի մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել մի շարք հեղինակների կողմից իրականացված հետազոտությունները, հրապարակված գիտական աշխատությունները և դրանցում ներկայացված տեսակետները:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքային տեքստը կազմում է 17 տպագրական էջ:

ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Մանկավարժի մասնագիտությունը հնագույներից է: Նրանում կուտակված են սերունդների հազարամյա փորձը, ըստ էության՝ մանկավարժը սերունդներին կապող օղակն է, հասարակական-պատմական փորձի կրողը: Ժողովրդի հասարակական-մշակութային ամբողջականությունը մեծապես պայմանավորված է Դպրոց-Ուսուցիչ դերով[1]:

Վերջին ժամանակներում մանկավարժական գիտության մեջ և մասնագիտական կրթության ոլորտում մեծ տարածում և կիրառություն են գտել <<մասնագիտական կոմպետենտություն>> և <<մանկավարժական կոմպետենցիաներ>> հասկացությունները:

Կոմպետենտությունը մասնագիտական-մանկավարժական գործունեության տեսանկյունից մեկնաբանվում է որպես տեսական գիտելքները, գործնական կարողությունները և մասնագիտական որակները միավորող մի ամբողջական երևույթ, մասնագիտական կարողունակություն:

Յուրաքանչյուր մանկավարժական կոմպետենցիա բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- ճանաչողական ոլորտ՝ գիտելիքներ,
- դրդապատճառային ոլորտ՝ կոմպետենցիաների արտահայտման պատրաստություն,
- արժեքաիմաստային ոլորտ՝ կոմպետենցիաների բովանդակության նկատմամբ վերաբերմունք,
- վարքագծային ոլորտ՝ տարբեր իրավիճակներում կոմպետենցիաների դրսևորման փորձ:

Այսպիսով՝ կոմպետենտության հիմքում ոչ միայն գիտելիքները, կարողությունները և հմտություններն են այլ նաև՝ ուսուցման արդյունքները, արժեհամակարգը, դրդապատճառային, վարքագծային, սոցիալական բաղկացուցիչները:

Սակայն պետք է նշել, որ կան հետազոտողներ, որոնք կոմպետենտությունը չեն կապում որոշակի գիտելիքների և կարողությունների հետ, քանի որ գիտելիքները,

[1]Մանուկյան Մ., Մանկավարժություն, Երևան, 2000թ.,էջ 91:

կարողությունները ժամանակի ընթացքում՝ մշակույթի, գիտության զարգացմանը, հասարակական գիտակցության փոփոխությանը զուգընթաց հնանում են, կորցնում են իրենց արդիականությունը:

Կոմպետենտությունը ներկայանում է որպես մանկավարժական գործունեության ընթացքում ցուցաբերած մասնագիտական և անձնային բաղադրիչների ամբողջություն՝ անձնային որակների գերակայությամբ: Անձնային որակների շարքում նշվում են ինքնուրույնությունը, հաղորդակցվելու ունակությունը, ճշտապահությունը, ինքնազարգացման ձգտումը, որոշակի աշխատանքային պայմաններում հարմարվելու կարողությունը:

Մասնագիտական կոմպետենտությունը ավելի լայն է հասկանում և առաջարկում է նրա բաղադրամասերի հետևյալ դասակարգումը.

- մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների համակարգ,
- մասնագիտական խնդիրներն ինքնուրույն ստեղծագործական լուծելու ձգտում և ունակություն,
- մարդկանց հետ աշխատելու, համագործակցելու հոգեբանական և սոցիալ-հոգեբանական պատրաստություն,
- բարոյագաղափարական հասունություն և շփման, հաղորդակցման մշակույթ[2]:

Մանկավարժի մասնագիտական կոմպետենտությունը ենթադրում է.

- Որակավորման բարձր մակարդակ:
- Տվյալ ոլորտում գործելու իրավասություն:
- Մասնագետի կրթվածության մակարդակ:
- Կատարողական վարպետություն:
- Ընդհանուր-մշակութային կոմպետենտության բաղադրամաս:

Մասնագիտական-մանկավարժական կոմպետենտության բաղադրամասերն են.

- Ոչ միայն հարուստ և լայն առարկայական գիտելիքներ, այլ նաև տեսական գիտելիքներ մանկավարժությունից, հոգեբանությունից և այլ գիտություններից:

[2]Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան, 2005թ.,էջ 104:

- Սովորողների և գործընկերների հետ հաղորդակցվելու և համագործակցելու կարողություններ և ունակություններ:
- Դիմացինին գնահատելու, արժեվորելու ունակություններ:
- Անձնային և մասնագիտական որակների առկայություն:

Առանձնացվում է ուսուցչի մասնագիտական հետևյալ առանցքային կոմպետենցիաները.

- առարկայական-մեթոդական,
- հոգեբանամանկավարժական,
- ճանաչողական,
- սոցիալ-մշակութային,
- հանրամշակութային,
- գիտահետազոտական,
- հաղորդակցական,
- կառավարման,
- տեղեկատվական-տեխնոլոգիական,
- խոսքային-լեզվական,
- նախաձեռնողական-կազմակերպական և այլն:

Մասնագիտական-մանկավարժական կոմպետենտության կարևոր բաղադրիչ է նաև ռեֆլեքսիան:

Ռեֆլեքսիան անձի ներհոգեկան ակտերի և վիճակների ինքնաճանաչման գործընթացն է: Դա մարդու գործունեությունն է, որն ուղղված է սեփական գործողությունների, ներքին վիճակների, զգացմունքների, ապրումների իմաստավորմանը, վերլուծությանը և համապատասխան եզրահանգումների կատարմանը:

Որպեսզի մարդը կարողանա հասկանալ ինքն իրեն, վերահսկի և կարգավորի սեփական գործողությունները, զարգացնի իր ներաշխարհը, նա պետք է ունենա ռեֆլեքսիվության զարգացման բարձր մակարդակ:

ԳԼՈՒԽ 2. ՈՒՍՈՒՑՉԻ ԿՈՂՄԻՑ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՆԿԱՏՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

Մանկավարժի աշխատանքը շատ բարդ և դժվարին է: Նրա գործունեությունը ներառում է իր տքնաջան աշխատանքի բոլոր ձևերը, ինչպես նաև անձնային բարոյական բոլոր հատկանիշների դրսևորումները[3]:

Մանկավարժի անձը ուսուցանման մթնոլորտում առաջնային տեղ է զբաղեցնում, նրա այս կամ այն հատկությունները բարձրացնում կամ իջեցնում են ուսուցանման դաստիարակչական ազդեցությունը:

Ընդհանուր առմամբ, առանձնացվում են <<հատուկ ուսուցչական հատկություններ>>՝ վերագրելով դրանց <<ուսուցչի գիտական նախապատրաստությունը>> և <<անձնական ուսուցչական տաղանդը>>: Առաջին հատկությունն օբյեկտիվ է և բնութագրում է ուսուցչի կողմից դասավանդվող առարկայի իմացության աստիճանը, գիտական պատրաստվածությունը, կրթվածությունը, այնուհետեև առարկայի մեթոդաբանության հետ, ընդհանուր դիդակտիկ սկզբունքների հետ ծանոթությունը, երեխայի բնույթի իմացությունը:

Երկրորդ հատկությունը սուբյեկտիվ է և արտացոլում է դասավանդման արվեստը, անձնական մանկավարժական տաղանդն ու ստեղծագործականությունը: Այն ներառում է մանկավարժական տակտը, ինքնուրույնությունն ու արվեստը:

Բացի <<հատուկ ուսուցչական հատկություններից>>՝ անհրաժեշտ է նշել նաև <<բարոյական>> հատկությունների մասին, որոնց դասվում են անկողմնակալությունը, բարեսրտությունը, ուշադրությունը, արդարությունը, կայունությունը, նրբազգացութունը, իսկական սերը աշակերտների հանդեպ: Նաև նշենք, որ դասվարի համար շատ կարևոր է ինքնակատարելագործման, ինքնազարգացման ցանկությունը:

Աշակերտների հետ շփման գործում դասվարը պետք է օժտված լինի անձնային բարձր որակներով: Անհրաժեշտ է այնպիսի որակների համադրություն, ինչպիսիք են նպատակաուղղվծաությունը, վճռականությունը, աշխատասասիրությունը, դիտողականությունը: Հատուկ ընդգծվում է սրամտության, հռետորական, արտիստիկ ընդունակությունների կարևորությունը:

---

[3]Коджаспирова Г.М., Педагогика: Учебник для СПО//Г.М. Коджаспирова//Люберцы: Юрайт, 2016,էջ 17:

Մանկավարժին՝ որպես գործունեության սուբյեկտի դիտարկելիս հետազոտողները առանձնացնում են մասնագիտական-մանկավարժական որակներ, որոնք կարող են մոտ լինել ընդունակություններին և զուտ անձնային որակներին: Դրանց են դասվում՝ մանկավարժական էրուդիցիա, մանկավարժական նպատակադրում, մանկավարժական մտածողություն, մանկավարժական հնարամտությունը, մանկավարժական կանխատեսումը, մանկավարժական ռեֆլեքսիան:

Մանկավարժը իր բնույթով պետք է լինի կենսուրախ, կենսախինդ, շիտակ, ուղղամիտ, ճշմարտացի, արդարամիտ, ունենա մեղմ բնավորություն, իր և աշակերտների միջև մշակի առողջ փոխհարաբերություններ, իր սաներին համարի իր լավագույն բարեկամները, ապրի նրանցով, հարգի երեխայի անձը, լինի նրբանկատ և ուշադիր, երբեք ու երբեք աշակերտին չդիտի որպես ենթարկվողի, իսկ իրեն՝ տիրապետողի դերում:

Իսկապես հնարավոր չէ միայն լավ մարդ լինելով՝ նաև լավ ուսուցիչ լինել: Լավագույն ուսուցիչը նա է, ում մասնագիտական գիտելիքները և բարոյական որակները մշտապես միասնության մեջ են և գործում են անխափան: Հարուստ գիտելիքներն ու բարոյական որակներն այն «սլաքներն են», որոնցից առաջինը (գիտելիքները) ցույց է տալիս ուսուցչի խելքի ուժը, իսկ երկրորդը (բարոյական որակները)՝ հոգու ուժը: Բավական է այդ ուժերից մեկը բացակայի, ուսուցիչը կզրկվի իր բարձր կոչման տերը լինելուց:

Հետևաբար պետք է նշենք, որ դպրոցականների անձը ձևավորելու և զարգացնելու համար կարևոր են դասվարի և՛ մասնագիտական, և՛ անձնային որակները:

Դժվար է ասել, թե որտեղից է սկսում բազմահմուտ մանկավարժի գործունեությունը և որտեղ է ավարտվում: Յուրաքանչյուր քայլափոխի նա առնչվում է ուսումնադաստիարակչական որևէ երևույթի, փաստի, դեպքերի: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ մանկավարժի մասնագիտական գործունեությունը մի անծայրածիր, տարողունակ, անսահման և անեզր ասպարեզ է: Եվ որպեսզի նա կարողանա լուծել իր առջև հառած բոլոր խնդիրները, պարտավոր է տեղյակ լինել մանկավարժական գիտության բոլոր նորարարություններին, նոր հայեցակարգին, նոր նվաճումներին, առաջավոր փորձին: Հետևապես, որքան տարողունակ է մանկավարժի պրոֆեսիան, այդքան տարողունակ պետք է լինի նաև նրա խելքը: Այլապես և՛ ուսուցիչը, և՛

աշակերտները զրկված կլինեն փոխազդեցությունների այն հարաբերակցությունից, որ պահանջում է ժամանակակից մանկավարժությունը:

Մանկավարժը կարող է ունենալ հարուստ գիտելիքներ, լայն մտահորիզոն, բազմակողմանի զարգացվածություն, սակայն չկարողանա իր իմացածը մատուցել աշակերտներին: Չկարողանա լուծել նրանց կրթական, դաստիարակչական և զարգացման խնդիրները: Այսպիսով, կարող ենք նշել, որ լավագույն մանկավարժ լինելու համար որքան կարևոր են մասնագիտական գիտելիքները, այդքան անգամ էլ՝ նրա մանկավարժական վարպետությունը:

Մանկավարժական վարպետություն ունեցող ուսուցիչը խորապես գիտակցում է, թե ուսուցման և դաստիարակության գործընթացներում երբ ինչ անել և դա ինչպես անել, որպեսզի ի կատար ածվի հետապնդվող նպատակը և ապահովվի բարձր արդյունքը:

Մանկավարժական վարպետությունը որպես հասկացություն ներառում է ուսուցչի մանկավարժական, հոգեբանական խորագիտությունը, մասնագիտական ընդունակությունները և մանկավարժական տեխնիկայի ուղղությամբ ունեցած կարողությունները: Այս մտքերն ամեն օր պետք է մանկավարժին հիշեցնեն մանկավարժական վարպետություն ձեռք բերելու մասին:

Մանկավարժի որակավորումը և նրա աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու գլխավոր նախապայման է նրա հոգեբանական գրագիտության աճը, տարիքային և ընդհանուր մանկավարժական հոգեբանության գծով գիտելիքների խորացումը: Առանց աշակերտներին <<վնաս>> պատճառելու, հնարավոր չէ նրանց ուսուցանել:

Չիմանալով տվյալ տարիքի հոգեբանական առանձնահատկությունները, չկարողանալով ճիշտ գնահատել սովորողի անհատական-հոգեբանական որակները՝ ուսուցիչը չի կարող ճիշտ ընտրել մանկավարժական ներգործության միջոցներ և, բնականաբար, չի կարող իմանալ, թե ինչ է ստեղծում:

Միայն ուսուցչի հոգեբանական լուրջ պատրաստությունը հնարավորություն կընձեռնի նրան ժամանակակից բազմապիսի մեթոդներից և մեթոդական հնարներից ու միջոցներից ընտրել այն, ինչ անհրաժեշտ է կոնկրետ մանկավարժական խնդիրների լուծման համար: Առանց ուսուցչի հոգեբանական հեռատեսության հնարավոր չէ

կանխագծել աշակերտների վարքը, իսկ առանց վարքի կանխագծման հնարավոր չէ նրանց անձնավորության նպատակասլաց ու կազմակերպված ձևավորումը:

Գաղտնիք չէ, որ դպրոցում դեռևս նշանակալից է աշակերտների անառաջադիմության տոկոսը: Անառաջադիմությունը հաճախ կապված է սովորել չցանկանալու, անկարգապահության, առանձին առարկաների, ուսուցչի կամ ամբողջ դպրոցի պահանջների նկատմամբ աշակերտի անլուրջ վերաբերմունքի հետ: Դրանում մեղքի իրենց բաժինն ունեն և՛ ծնողները, և՛ փողոցը, և՛ այն ուսուցիչները, որոնք չեն մտածում իրենց գործողությունների հոգեբանական նպատակասլացության մասին և հաճախ աշակերտներին պատճառում են դժվար ուղղելի հոգեկան ցնցում:

Մանկավարժի ամեն մի քայլը, նրա ամեն մի բառը, գործադրվող ամեն մի հնար հագեցված է որոշակի իմաստով և աշակերտների մոտ առաջանում է համապատասխան հոգեբանական արձագանք: Ահա, թե ինչու շատ կարևոր է, որպեսզի ամեն մի մանկավարժ տիրապետի հոգեբանական բավականաչափ հմտությունների, որոնք անհրաժեշտ են իր ուսումնադաստիարակչական գործունեության ճիշտ և արդյունավետ նպատակին հասնելու համար:

Մանկավարժի ստեղծագործական աշխատանքային ինքնազգացողությունը մշտապես փոխկապակցության մեջ է դասարանի հոգեբանական կապի հետ: Այդ առումով անհրաժեշտ է, որ նա դասի ընթացքում հետևի յուրաքանչյուր աշակերտի մտքերի ու զգացմունքների առաջխաղացմանը:

Աշակերտների հայացքում կասկածանք, անհասկանալի բան, թերմտություն նկատելու դեպքում ուսուցիչը իր ասելիքը բացատրի այլ կերպ, ուժեղացնի արտահայտչական կողմը, եթե անհրաժեշտ է, հետ դառնալ, կրկնել դատողությունների ընթացքը: Այդ ամենը կօգնի աշակերտին ոչ միայն լավ հասկանալու ուսումնական նյութը, այլև նորմալ հարաբերություններ հաստատելու ուսուցչի հետ:

Ստեղծագործաբար աշխատող ուսուցիչը մշտապես մտահոգվում է իր մտահորիզոնի, հետաքրքրությունների շրջանակների ընդլայնմամբ և իր հոգեբանական գիտելիքների հարստացմամբ, քանի որ դեռահասների հետ տարվող աշխատանքի հաջողությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ այն կառուցվում է նրանց տարիքային և անհատական-հոգեբանական առանձնահատկություններին համապատասխան:

Մանկավարժի և աշակերտների միջև սերտ փոխհարաբերության պարտադիր պայմանը մանկավարժական տակտի առկայությունն է, որը մեծ մանկավարժ Ուշինսկին համարում է հոգեբանական տակտ: Այսինքն.

- ուսուցչի վերաբերմունքի մեջ պետք է լինի բնականություն և պարզություն առանց անպատշաճ մոտիկության,
- վստահություն առանց վարքագծի նորմերի չարաշահման,
- տոնի լրջություն առանց ավելորդ լարվածության,
- պահանջկոտություն առանց որևէ բծախնդրության,
- բարի կամեցողություն առանց փաղաքշանքի,
- իրոնիա և հումոր առանց զավեշտության:

Մանկավարժի և աշակերտների միջև հոգեբանական մերձեցման ձևավորմանը նպաստող գործոններից է նաև ուսուցչի մտահոգությունը համադասարանցիների միջև բարեկամական հարաբերությունների զարգացման մասին, դասարանում այնպիսի մթնոլորտի ստեղծման մասին, որի առկայությամբ յուրաքանչյուր աշակերտ իրեն հավասար զգա հավասարների մեջ: Հակառակ դեպքում՝ մշտապես խարազանելով այսինչ աշակերտին և նրանց համար օրինակ դարձնելով ուրիշներին՝ ուսուցիչը դրանով ամրապնդում է անիրավահավասար հարաբերություններ:

Մանկավարժը պետք է ձգտի կոլեկտիվում դաստիարակել ճիշտ փոխհարաբերություններ, չընդգծի ոմանց հաջողությունները, ոմանց անհաջողությունները, չվիրավորի երեխային ամբողջ դասարանի առջև, հաճախ աշակերտների հետ անհատական զրույցներ ունենալ, նկատել թույլերի նույնիսկ ամենափոքր հաջողությունները, բայց սուր կերպով չընդգծել դրանք որպես անսպասելի բաներ:

Այսպիսով, մանկավարժի կլանվածությունը իր գործով, նրա բարիացակամ և արդարացի վերաբերմունքը դասարանի յուրաքանչյուր աշակերտի հետ, նրա հոգատարությունը և մտահոգությունը համադասարանցիների միջև հարաբերություններ ստեղծելու մասին ամրապնդում են ուսուցչի հեղինակությունը, առաջացնում և ամրապնդում են իր նկատմամբ (բնականաբար նաև իր դասավանդած առարկայի նկատմամբ) աշակերտների սերն ու հարգանքը: Իսկ ժամանակակից աշակերտի և շրջապատի հետ ունեցած կապերի շրջանակը շատ լայն է:

Մանկավարժի աշխատանքի բաղկացուցիչ մասն է կազմում նաև դասի պլանավորումը և անցկացումը:

Դասի պլան կազմելիս մանկավարժը նշում է նախ և առաջ առարկան, ապա այն թեման, որը տվյալ դասաժամի ընթացքում մատուցվելու է աշակերտներին:

Ուսուցիչը թեմայի շուրջ պատրաստում է հարցեր, խաղ-առաջադրանքներ, որոնք ավելի հետաքրքիր են դարձնում օրվա դասը: Դասի ընթացքում թեմայում առկա բարդ և անհասկանալի բառերը գրվում են գրատախտակին և հանձնարարվում են սովորել:

Դասընթացների ինտեգրման ժամանակ մեծ տեղ են գրավում նաև երկխոսությունները: Երկխոսությունների գործընթացը ակտիվացնելու համար մաթեմատիկայի դասերին ուսուցչի նախաձեռնությամբ կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ:

Ուսումնական երկխոսությունները մաթեմատիկայի դասաժամերին հիմնականում կիրառվում են ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել ուսանողի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը:

Դասընթացները պետք է խորապես և հավասարաչափ ուսուցանվեն, որպեսզի հավասար ուշադրություն տրամադրվի գործընթացային վարժ իմացությանը, գաղափարային հասկացողությանը, տրամաբանությանը, խնդիրներ լուծելուն և մաթեմատիկական ճանաչողության զարգացմանը: Երբ այս նպատակները բավարարվեն, աշակերտները կհասկանան մաթեմատիկան, որը պետք կգա նրանց ամբողջ կյանքի ընթացքում:

Արագացված ուսուցումը չպետք է տեղի ունենա բաց թողնված գիտելիքների հաշվին, երբ աշակերտին չի ներկայացվել դրանց վերաբերյալ հիմնավոր չափանիշներ:

Երբ խնդիրների ուսուցման ընթացքում շտապում կամ բաց են թողնվում ուսուցման կարևոր մասեր, որոնց արդյունքում աշակերտը չի կարող զարգացնել խորը գիտելիքներ, ապա այն կարող է հանգեցնել այն հանգամանքին, որ աշակերտները դուրս կմնան մաթեմատիկա առարկայից, կկրճատեն նրանց ապագա մաթեմատիկական հնարավորությունները. հետևաբար, նրանք կորցնելու են իրենց հնարավորությունը՝ ժողովրդավարական հասարակության լիակատար անդամ լինելու համար:

Խնդիրների ուսուցման նպատակներն են սովորողի մոտ ձևավորել և զարգացնել տրամաբանական, լեզվական և ալգորիթմական մտածողություն, կռահելու կարողություն, սովորեցնել ձեռք բերած գիտելիքները և կարողությունները կիրառել տարբեր գործնական խնդիրներ լուծելիս, զարգացնել սովորողի ուշադրությունը, դիտողականությունը,հիշողությունը, աշխատասիրությունը, նպատակասլացությունը, համբերությունը, ինքնուրույնությունը, հնարամտությունը, սերմանել վստահություն սեփական ուժերի նկատամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

- Ամփոփելով հարկ ենք համարում նշել, որ մանկավարժին՝ որպես գործունեության սուբյեկտի դիտարկելիս հետազոտողները առանձնացնում են մասնագիտական-մանկավարժական որակներ, որոնք կարող են մոտ լինել ընդունակություններին և զուտ անձնային որակներին: Դրանց են դասվում՝ մանկավարժական էրուդիցիա, մանկավարժական նպատակադրում, մանկավարժական մտածողություն, մանկավարժական հնարամտությունը, մանկավարժական կանխատեսումը, մանկավարժական ռեֆլեքսիան:
- Մանկավարժը կարող է ունենալ հարուստ գիտելիքներ, լայն մտահորիզոն, բազմակողմանի զարգացվածություն, սակայն չկարողանա իր իմացածը մատուցել աշակերտներին: Չկարողանա լուծել նրանց կրթական, դաստիարակչական և զարգացման խնդիրները: Այսպիսով, կարող ենք նշել, որ լավագույն մանկավարժ լինելու համար որքան կարևոր են մասնագիտական գիտելիքները, այդքան անգամ էլ՝ նրա մանկավարժական վարպետությունը:
- Մանկավարժական վարպետություն ունեցող ուսուցիչը խորապես գիտակցում է, թե ուսուցման և դաստիարակության գործընթացներում երբ ինչ անել և դա ինչպես անել, որպեսզի ի կատար ածվի հետապնդվող նպատակը և ապահովվի բարձր արդյունքը:
- Մանկավարժական վարպետությունը որպես հասկացություն ներառում է ուսուցչի մանկավարժական, հոգեբանական խորագիտությունը, մասնագիտական ընդունակությունները և մանկավարժական տեխնիկայի ուղղությամբ ունեցած կարողությունները: Այս մտքերն ամեն օր պետք է մանկավարժին հիշեցնեն մանկավարժական վարպետություն ձեռք բերելու մասին:

- Մանկավարժի որակավորումը և նրա աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու գլխավոր նախապայման է նրա հոգեբանական գրագիտության աճը, տարիքային և ընդհանուր մանկավարժական հոգեբանության գծով գիտելիքների խորացումը: Առանց աշակերտներին <<վնաս>> պատճառելու, հնարավոր չէ նրանց ուսուցանել:
- Չիմանալով տվյալ տարիքի հոգեբանական առանձնահատկությունները, չկարողանալով ճիշտ գնահատել սովորողի անհատական-հոգեբանական որակները՝ ուսուցիչը չի կարող ճիշտ ընտրել մանկավարժական ներգործության միջոցներ և, բնականաբար, չի կարող իմանալ, թե ինչ է ստեղծում:
- Միայն ուսուցչի հոգեբանական լուրջ պատրաստությունը հնարավորություն կընձեռնի նրան ժամանակակից բազմապիսի մեթոդներից և մեթոդական հնարներից ու միջոցներից ընտրել այն, ինչ անհրաժեշտ է կոնկրետ մանկավարժական խնդիրների լուծման համար: Առանց ուսուցչի հոգեբանական հեռատեսության հնարավոր չէ կանխագծել աշակերտների վարքը, իսկ առանց վարքի կանխագծման հնարավոր չէ նրանց անձնավորության նպատակասլաց ու կազմակերպված ձևավորումը:
- Մանկավարժի ամեն մի քայլը, նրա ամեն մի բառը, գործադրվող ամեն մի հնար հագեցված է որոշակի իմաստով և աշակերտների մոտ առաջանում է համապատասխան հոգեբանական արձագանք: Ահա, թե ինչու շատ կարևոր է, որպեսզի ամեն մի մանկավարժ տիրապետի հոգեբանական բավականաչափ հմտությունների, որոնք անհրաժեշտ են իր ուսումնադաստիարակչական գործունեության ճիշտ և արդյունավետ նպատակին հասնելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մանուկյան Մ., Մանկավարժություն, Երևան, 2000թ.:
2. Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան, 2005թ.:
3. Коджаспирова Г.М., Педагогика: Учебник для СПО//Г.М. Коджаспирова//Люберцы: Юрайт, 2016.